ԵԿԵՂԵՑՈՒ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՍՏՈՐԱԳՐՎԵՑ «ՄՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՈՒՇԱԳԻՐ»

2000 թ. մարտի 17-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Հայաստանի Հանրապետության կառավարության և Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու միջև ստորագրվեց «Մտադրությունների հուշագիր», որն առաջիկայում հիմք կհանդիսանա Եկեղեցի-պետություն փոխհարաբերություններն առավել հստակեցնող և կարգավորող համաձայնագրի:

Հուշագրի ստորագրմանը ներկա էին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ՀՀ վարչապետ Արամ Սարգսյանը, ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանը:

Հայ Առաքելական Եկեղեցու կողմից փաստաթուղթը ստորագրեցին Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպս. Կճոյանը և Երևանի պետական համալսարանի աստվածաբանության ֆակուլտետի դեկան Տ. Շահե արքեպս. Աճեմյանը: Կառավարության կողմից հուշագիրը ստորագրեցին ՀՀ վարչապետի գլխավոր խորհրդական, ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար Շահեն Կարամանուկյանը և ՀՀ վարչապետի խորհրդական, ՀՀ կառավարությանն առընթեր Կրոնի գործերի պետական խորհրդի նախագահի պաշտոնակատար Լևոն Մկրտչյանը:

«Մենք բերկրանքի և ուրախության պահ ենք ապրում, քանզի առաջին անգամ լինելով՝ այս հարկի ներքո և մեր իրականության մեջ ստորագրվեց մի հուշագիր, որի հիման վրա կբանաձևվեն համագործակցության այն բոլոր ոլորտները, ուր Եկեղեցին և պետությունը միասնաբար, ջանքերի համադրումով պետք է լծվեն մեր հայրենիքի շինության, Եկեղեցու զորացման և ժողովրդի երջանիկ, բարօր կյանքի կերտման նվիրական գործին»,- ասաց Վեհափառ Հայրապետը՝ իր գնահատանքի և օրհնության խոսքն ուղղելով հայրենի իշխանություններին՝ ցուցաբերած նախանձախնդիր վերաբերմունքի համար:

Կողմերը բարձր գնահատեցին նման հուշագրի վավերացման փաստը՝ նշելով, որ այս փաստաթղթի ստորագրմամբ կարևորվում է Հայ Առաքելական Եկեղեցու դերը հասարակական կյանքի ամենատարբեր ոլորտներում:

Ի պատասխան լրագրողների հարցումների, նշվեց նաև, որ սա բարի ցանկությունների հերթական փաստաթուղթ չէ, այլ պատմական մի փաստաթուղթ, որն առաջին անգամ ստորագրում են հայ անկախ պետականությունը և Հայոց Եկեղեցին, և որն անպայման իր գործնական նշանակությունն է ունենալու:

Եկեղեցի-պետություն փոխհամագործակցության վերջնական համաձայնագրի ստորագրումը նախատեսվում է իննամսյա ժամկետում:

ՄՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՈՒՇԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության կառավարության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու միջև

Առանձնակի կարևորելով Հայոց պետականության հետագա զարգացման և ամրապնդման գործում Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու անուրանալի դերակատարումն ու նշանակությունը,

նկատի ունենալով Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու բացառիկ և առանձնահատուկ դերը հայ ժողովրդի պատմական ճակատագրում և արդի հայ հասարակության կյանքում,

առաջնորդվելով մարդու իրավունքներին և հիմնական ազատություններին վերաբերող միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներով և նորմերով,

նպատակ հետապնդելով առավել պարզորոշել Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու փոխհարաբերությունների բնույթը և բովանդակությունը՝

մի կողմից Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ հանձինս Հայաստանի Հանրապետության վարչապետի գլխավոր խորհրդական, Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավար Ծ. Կարամանուկյանի և Հայաստանի Հանրապետության վարչապետի խորհրդական, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Կրոնի գործերի պետական խորհրդի նախագահի պաշտոնակատար Լ. Մկրտչյանի, և մյուս կողմից Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին՝ հանձինս Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ, Գերաշնորհ Տեր Նավասարդ եպիսկոպոս Կճոյանի և Երևանի պետական համալսարանի աստվածաբանության ֆակուլտետի դեկան, Գերաշնորհ Տեր Շահե արքեպիսկոպոս Աճեմյանի (այսուհետ՝ կողմեր) ստորագրեցին մտադրությունների սույն հուշագիրը.

1. Կողմերն անհրաժեշտ են համարում Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու միջև կնքվելիք համաձայնագրի նախագծի նախապատրաստման նպատակով համատեղ աշխատանքներ ծավալել հետևյալ հիմնական ուղղություններով.

ա) Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու փոխհարաբերությունները կարգավորող օրենսդրության հետագա կատարելագործում և զարգացում.

բ) Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու, իբրև իրավաբանական անձի սեփականության (հող, անշարժ և շարժական գույք, պատմամշակութային հուշարձաններ և այլն) հետ կապված հիմնահարցերի հստակեցում.

գ) Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու և նրա ավանդական կազմակերպությունների համար որոշակի հարկային արտոնությունների սահմանում.

դ) միջազգային ընդունված արարողակարգային չափանիշներին և հայ ժողովրդի ազգային սովորույթներին ու ավանդույթներին, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պետական արարողակարգին համապատասխան Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու սպասավորների մասնակցությամբ անցկացվող պետական արարողակարգային միջոցառումների իրականացման կարգի մշակում.

ե) ազգային կրթամշակութային, սոցիալական ապահովության, առողջապահության և հոգևոր ոլորտում Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու դերի և նշանակության կարևորում.

զ) պետական լրատվամիջոցներով և պետության կողմից իրականացվող միջոցառումների ժամանակ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու պատմության, դավանաբանության քարոզչության և ուսուցման գերակայության ապահովում.

է) Հայաստանի Հանրապետության զինված ուժերում, զինծառայողների հոգևոր կյանքում և ռազմահայրենասիրական դաստիարակության գործում, ինչպես նաև բնչական մնկուսարաններում, ազատազրկման վայրերում, կալանավորների և դատապարտյալների շրջանում Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու գործունեության հետագա ընդարձակում:

2. Կողմերը համաձայնեցին.

Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու միջև կնքվելիք համաձայնագրի նախագիծը նախապատրաստելու համար նախանշված ուղղություններով երկուստեք ստեղծել աշխատանքային խմբեր, Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու միջև կնքվելիք համաձայնագրի նախագծի վերջնական տարբերակը ստորագրման նախապատրաստել ինանմայա ժամկետում:

3. Սույն հուշագիրը ստորագրված է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում 2000 թ. մարտի 17-ին, երկու բնօրինակից:

ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ